



## Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

### ԴՄԵՂԻ ԲԱՐՁՐԱՔԱՇ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԵՎ ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՄ՝ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դսեղ գյուղը գտնվում է նախկին Ալավերդու շրջանում, որն այժմ կոչվում է Թումանյանի շրջան (պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Տաշիր կամ Լոռի գավառում)։

Գյուղը տեղավորված է՝ հարավից հյուսիս ձգվող սուրանկյուն-եռանկյունու ձև ունեցող մի ընդարձակ սարահարթի վրա՝ սուր անկյունով ուղղվելով դեպի հյուսիս. նրա արեւելյան և արևմտյան կողերը համապատասխանաբար եզերվում են Սաղու-ձորի կամ Չաղի-ձորի և Դեբեդա-ձորի անդնդախոր ձորերով, իսկ հարավային կողմից հարակցվում է ընդհանուր լեռնաշղթային, «մեջքը հեռած լեռներից», ուր բարձրանում է ս. Սարգիս լեռնագագաթը։

Ծանապարհը՝ Երևան-Թբիլիսի երկաթուղու Քոլագիրան (այժմ Թումանյան) կայարանից Դեբեդա-ձորի աջ ձորալանջով ոլորապտույտ բարձրանալով, տանում է դեպի գյուղը, որը երեք կիլոմետրաչափ հեռու է հիշյալ կայարանից։

Հնում այդ ճանապարհը լեռնային սովորական մի կածան էր, ուր մարդիկ երթևե-

կում էին հետիոտն կամ գրաստներով. իսկ այժմ նա լայն ու բարեկարգ խճուղի է, որով երթևեկում են ամեն տեսակի ավտոմեքենաներ։

Գյուղի սահմաններում պահպանված նյութական մշակույթի հարուստ և արժեքավոր մնացորդները վկայում են այն մասին, որ Դսեղը Հայաստանի ամենահինագույն և նշանավոր բնակավայրերից մեկն է եղել։

Պահպանված նյութական մշակույթի այդ մնացորդների մեջ առավել ուշադրության արժանի և նշանակալից է Բարձրաքաշ ս. Կրիգորի վանքի հուշարձանների խումբը, որը գտնվում է գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Չաղի-ձորի կամ Սաղու-ձորի անտաճապատ ձախ ձորալանջի մի փոքրիկ հարթակի վրա (նկ. 1)։


Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում երբեմնի այդ նշանավոր մենաստանի մասին։ Նրա անցյալ պատմության մասին որոշ չափով նյութ կարող են ծառայել վանքի վրա փորագրված բազում արձանագրությունները, ուր նշված



են առանձին հուշարձանների կառուցման ժամանակն ու կառուցողները, վանքին տրված բազմաթիվ կալվածներ ու այլ նվերներ, որոնք բնորոշում են նրա նյութա-տնտեսական հզորության աստիճանը:

Բացի վիմագիր արձանագրություններից, բարձրաքաշ ա. Գրիգորի վանքի անցյալ

Այդ եկեղեցու շենքը ամբողջովին չի պահպանվել. հետագայում նրա որոշ մասերը քանդվել են: Իսկ ալեյի ուշ՝ անցյալ դարի սկզբներին տեղացիք վերականգնում են եկեղեցու քանդված մասերը, որոշ չափով ձեկափոխում այն և դարձնում օգտագործելի եկեղեցի:



Նկար 1. Բարձրաքաշ ա. Գրիգոր վանք.—Վանքի հուշարձանների հիմնական խմբի ընդհանուր հաստակագիծը

պատմությանը հետաքրքիր նյութ կարող են ծառայել նաև տեղում պահպանված նյութական մշակույթի հարուստ մնացորդները: Այդ մնացորդների ուշադիր և մանրազնին ուսումնասիրությունը բերում է այն հաստատ համոզման, ըստ որի Մամիկոնյան նախարարության մի ճյուղն էլ, դուրս գալով իրենց բուն հայրենիքից, Տարոնից, գալիս է Գուգարք՝ Տաշիր գավառը և բնակություն հաստատում Դսեղ գյուղում:

Գյուղում պահպանվել է մի կիսավեր եկեղեցի, որի կառուցողական և մշակման ձևերը անվիճելիորեն վերաբերում են է դարին: Այդ եկեղեցու արևելյան պատի ճակատամասում քանդակված է Մամիկոնյան իշխանների տոհմաճիշը՝ երկգլխանի արծիվը՝ գառը ճանկերում բռնած: Այդ փաստը ինքնին վկայում է, որ նշված եկեղեցին կառուցված պետք է լինի Մամիկոնյան իշխանների կողմից: Իսկ դրանից էլ հետևում է, որ վերջիններս այստեղ բնակություն հաստատած պիտի լինեն էլ դարում:

Մամիկոնյանները, այդ եկեղեցու կառուցումից բավական ժամանակ հետո, հավանաբար Ժ—ԺԱ դարերում, ինչպես այդ կրտսենները հետո, հիմնում են Բարձրաքաշ ա. Գրիգոր վանքը: Իսկ դրանից էլ բավական ժամանակ ուշ, ԺԳ դարի առաջին կիսում, ավելի են ընդարձակում այն, կառուցելով հռչակապ եկեղեցի և չքնադագեղ գավիթ, դարձնելով վանքը իրենց տոհմական գերեզմանատեղին: Միաժամանակ վանքը հարըստացնում են բազմաթիվ ու բազմապիսի կալվածներով և այլ կարգի նվերներով, որոնց մասին նշվում է վանքի վրա փորագրված արձանագրություններում և որոնք մեջ են բերված վերջում:

Բարձրաքաշ ա. Գրիգորի վանքը, ինչպես այդ պարզ նկատվում է նրա կառուցվածքների կանգուն մնացած մասերից և տեղում թափված-քանդված մասերի բեկորներից, հանդիսացել է հայ արվեստի ու ճարտարապետության հռչակապ կոթողներից մեկը:

Բացի տեղում պահպանված այդ մնացորդներից, վանքի կառուցվածքների մասին



պահպանվել է մի ավանդություն, որի համաձայն նրա եկեղեցին այնքան բարձր է եղել, որ նրա գմբեթի վերևի ծայրի մետաղյա փայլուն խնձորակը, որի վրա սովորաբար ամրացված է լինում խաչը, տեսանելի է եղել սարահարթի վրայից, որ տեղավորված է գլխով: Այդ ավանդությունը նույն վկայությունն է այն բանի, որ Բարձրաքաշ ա. Գրիգորի վանքի կառուցվածքները իրոք եղել են բարձր ու հույակալ:

Սի ուրիշ ավանդության համաձայն, վանքի միաբանության անդամների թիվը այնքան մեծ է եղել, որ երբեմն անհետ կորած միաբանության անդամները մնացել են անհետ: Այդպես օրինակ, մեկ անգամ, զարնան ամիսներին, դարմանի միջից հաշտաբերվում է մի աբեղայի դիակ, որը դարմնոց է ընկել նախորդ տարվա կալոցից հետո՝ աղոտել դարման ցցելու ժամանակ ու դարմանի տակ մնալով խեղդվել: Այդ ավանդության մեջ շեշտվում է վանքի մեծության հանգամանքը:

Բարձրաքաշ ա. Գրիգորի վանքի մեծության մասին են վկայում նաև նրան նվեր տրված բազմաթիվ ու բազմապիսի կալվածներն ու այլ նյութա-տնտեսական միջոցները, որոնք թվարկված են վանքի վրա փորագրված արձանագրությունների մեջ, ինչպես և վանքի հուշարձաններին կից պահպանված ձիթհանի և միաբանության բնակելի՝ մեծ թիվ կազմող շենքերը, ընդարձակ գերեզմանատունը և այլ կառուցվածքներ:

Բացի վերը նշվածից, վանքի վրա փորագրված մի արձանագրության համաձայն (արձանագրություն ԻԸ), Գոկաի որդի Քորդ իշխանը, որը մինչ այդ Սանահին վանքին էր միաբանել ու այն ընտրել իրեն գերեզմանատեղի, 1246 թվականին դուրս է գալիս Սանահին վանքի միաբանությունից ու իր գերեզմանատեղից և միաբանելով Բարձրաքաշ ա. Գրիգորի վանքին, վերջինս է ընտրում իրեն հանգստատեղի:

Այդ վերջին հանգամանքը վկայություն է այն բանի, որ Բարձրաքաշ ա. Գրիգորի վանքը նշված ժամանակամիջոցին իր հոգևոր ու նյութական կացությամբ համագոր էր Սանահինի վանքին, որն այդ ժամանակ դասվում էր Հայաստանի գլխավոր վանքերի շարքը, ինչպես այդ մասին տեղեկացնում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին, — «էս գլխաւոր վանորայքն՝ Սանահինն և Գետիկ և Հաղարծին...»<sup>1</sup>:

Վանքի վրա փորագրված արձանագրություններից երևում է, որ նրան են միաբանել նաև այնպիսի նշանավոր իշխանական

տներ և նրանց առաջատար դիրք գրավող անդամներ, ինչպիսին Պոռչյան իշխանների տոհմն է ու նրա ղեկավար անձինք (արձանագրություն ԺԷ) և ուրիշներ, որոնք իրենց նվիրաբերություններով մեծապես նպաստել են վանքի զարգացմանն ու բարգավաճմանը: Վերը շարադրվածից միանգամայն ակնհայտ է դառնում, որ Բարձրաքաշ ա. Գրիգորի վանքը, որքանով դասվում էր հայ արվեստի և ճարտարապետության հույակալ կոթողների շարքը, նույն չափով էլ նա համարվում էր Հայաստանի նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը:

Թե երբ են ավերվել վանքի այնքան գեղեցիկ ու հետաքրքիր կառուցվածքները և երբ է դադարել նա որպես մենաստան գոյություն ունենալուց, ստույգ հայտնի չէ: Նրա վրա փորագրված արձանագրությունները ԺԴ դարից այն կողմ չեն անցնում: Ելնելով դրանից և դատելով վանքի փլատակների ընդհանուր դրվածքից, կարելի է ենթադրել, որ նա ավերված ու ամաչացած լինի մոնղոլական արշավանքների ժամանակ՝ ԺԴ—ԺԵ դարերում: Առավել հավանական է, որ վանքը ավերված լինի ԺԴ դարում: Այդ ենթադրության համար հիմք է ծառայում Դսեղ գյուղից դեպի Մարց գյուղը տանող ճանապարհի եզրին 1285 թվականին կանգնեցրած խաչքարի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը.

«Ի թուին 21Դ (1285). կանգնեցաւ խաչս ի նեղ և ի դառն ժամանակս թաթարաց, ի թագաւորութեան Դեմետրի՝ որդւոյ Դաւթի, ի հայրապետութեան տէառն Յոհաննիսի, ես՝ Թովմայ քահանայ և եղբայր իմ Տիրացոյ կանգնեցաք զխաչս ամենաիրկիչ՝ յիշատակ հար մերոյ Գրիգորի քահանային և մար մերոյ Թիբանուշային և քուերց մերոց՝ Տիրամարին և Տիրոցին և փեսայից մերոց անպատճառ քահանայից՝ Խաչատուրին և Մարգարին: Ով աստուածաւերք՝ որք երկրպագեք՝ զհանգուցեալս յիշեցեք ի Քրիստոս»:

Սովետական իշխանության տարիներին նկատելի աշխատանքներ են կատարվել վանքի հուշարձանների մաքրման ու բարեկարգման ուղղությամբ, որի ընթացքում մաքրված է հուշարձանների ներսն ու շրջապատը շինարարական աղբերից ու բուսած ծառերից, առանձնացված ու դասավորված են հայտնաբերված բեկորները և այլն:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Աստվածածնի անվան փոքրիկ եկեղեցի.—Գտնվում է հուշարձանների խմբի հյուսիսային կողմում: Ավերակ վիճակում է՝


<sup>1</sup> Կիրակոս վարդապետի Գանձակեցույ. —Համառոտ պատմություն, Վենետիկ, 1865, էջ 174:



պահպանվել են միայն պատերը՝ մոտ 4 մետր բարձրությամբ։ Վանքի ամենահին կառուցվածքն է։ Նրա կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ, իր կառուցողական ու մշակման ձևերով բնորոշ է Ժ—ԺԱ դարերին։ Անկասկած, այն կառուցված պետք է լինի Մամիկոնյան իշխանների կողմից (նկ. 2)։

միացությամբ։ Հետագայում, հստակաբար ԺԳ դարում, ենթարկվել է վերանորոգման, ուր, բացի նույն կապտագույն բազալտի կիսաառաջ քարերից, օգտագործվել է նաև վարդագույն տուֆի կիսաառաջ քարեր, իսկ ներսից ավաղած է եղել կրաշաղախով։

**Ս. Աստվածածնի անվան մեծ եկեղեցի.**— Գտնվում է նախորդ եկեղեցու հարավային



Նկար 2. Բարձրաքաշ ա. Գրիգոր վանք.—Աստվածածնի անվան երկու եկեղեցիները արևելքից

Եկեղեցին ոչ այնքան մեծ, միանավ բազիլիկ ձևով կառուցված մի շենք է, որն արևելյան կողմից ունի բավականին խորը, կիսակլոր արքիոք։ Վերջինիս երկու կողքերին կան մեկական փոքր խորաններ, որոնց մուտքերը բացվում են արքիոքի մեջ՝ իրար դիմաց։

Հարավային և հյուսիսային պատերին կից, ներսից ձգվում են մի-մի որմնասյուն, որոնք միանալիս են եղել թաղակապ ծածկը գոտկող կամարով։

Երկու մուտքերից մեկը բացվում է արևմտյան, իսկ մյուսը՝ հարավային կողմից՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարերով։ Արևմտյան մուտքից վերև բացվում է մի կլոր լուսանցք, մի փոքր լուսամուտ էլ բացվում է արևելյան պատից՝ արքիոքի մեջ։

Եկեղեցու կանգուն մնացած պատերի շարվածքի ձևը ցույց է տալիս, որ շենքը կառուցված է եղել կապտագույն բազալտի մաքուր տաշված քարերով, կրաշաղախի

կողմում, նրան կից։ Վանքի գլխավոր եկեղեցին է և, ինչպես ցույց է տալիս հարավային պատի վրա փորագրված արձանագրությունը (արձանագրություն Դ), կառուցել է Մամիկոնյան Սարգսի որդի Մարծպանը Հալոց ՈՀ (մեր թվագրության 1221) թվամսին (նկ. 2)։

Բավականին ընդարձակ, շատ հետաքրքիր ու բնորոշ ձևով կառուցված գմբեթավոր մի շենք է, երկարաձիգ, ուղիղ քառանկյունի հատակագծով և արևելյան կողմից հնգակող արքիոքով։

Ներսում, արևմտյան մասում տեղադրված երկու սյուները և արևելյան արքիոքի եզրերից ձգվող երկու կիսասյուները միանալով կամարներով կազմելիս են եղել տանիքի կենտրոնի քառակուսաձև բացվածքը, որի վրա հանգչելիս է եղել երբեմնի բարձր գմբեթը։ Սյուները միաժամանակ առանձին կամարներով միանալիս են եղել հարավային, արևմտյան և հյուսիսային պատերին



կից ձգվող կիսապուրակների հետ, կազմելով եկեղեցու թաղակապ ծածկը:

Թե՛ պուրակների և թե՛ կիսապուրակների բները, խարիսխներն ու խոյակները ամբողջական քարերից են, ըստ որի պուրակների բները ու թակող են, իսկ կիսապուրակների բները՝ արսիդի եզրերինը հնգակող են, իսկ մյուսները զլանաձև: Սյուների խոյակները վերևի մասում քառակուսաձև են, իսկ ստորինը՝ բնի վրա հենվող մասերը ութակող են և պատած են երկրաչափական զանազան ձևերի ու ստալակտիտ շատ գեղեցիկ զարդաքանդակներով: Իսկ պուրակների խարիսխները մասամբ ծածկված լինելով փլատակներով, նրանց մանրամասները պարզել հնարավոր չէ: Կիսապուրակների խարիսխներն ու խոյակները՝ նրանց բներին համապատասխանող ձևերով են:

Արևելյան արսիդի երկու կողքերին կան երկհարկանի խորաններ. ստորին հարկի խորանների մուտքերը բացվում են դեպի արեւմուտք՝ եկեղեցու մեջ, որոնց վերևում կան մեկական խորը խորշեր՝ դարակների ձևով, իսկ վերի հարկի խորանների մուտքերը բացվում են արսիդի մեջ՝ իրար դիմաց:

Եկեղեցին ունի երկու մուտքեր, որոնցից մեկը բացվում է դեպի հարավ՝ գավթի մեջ, իսկ մյուսը դեպի արևմուտք: Երկու փոքր լուսամուտներ բացվում են արևելյան արսիդի կենտրոնական մասից՝ վեր ու վար ձևով. ստորին լուսամուտի կողքերին կան երկուական վեր ու վար դասավորված խորշեր, որոնց կամարակապ գագաթները զարդարված են քանդակներով ու փոքրիկ խաչերով: Մեկական փոքր լուսամուտներ էլ բացվում են խորանների արևելյան պատերից:

Ամբողջ շենքը կառուցված է վարդագույն տուֆի մաքուր տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ, ըստ որի պատերի երեսապատ քարերը բարակ սալիկների ձևով են: Արևելյան պատի վերին մասը արտաքուստ պատած է երկրաչափական ձևերի շքեղ զարդաքանդակներով, իսկ այդ կողմից պատի անկյունային մասերում կան թոշնաքանդակներ՝ բուսական ձևերի զարդաքանդակներով պարուրված:

Հարավային մուտքի ճակատակալ քարի արտաքին երեսի վրա նկատելի են որմնանկարների մնացորդներ, որոնց բովանդակությունը պարզել հնարավոր չէ: Ականառեսների պատմելով տարիներ առաջ այն ամբողջական վիճակում է եղել, որ պատկերված է եղել ու Գևորգ գորավարը՝ հեծյալ դրությամբ և նիզակը ձեռքին:

Եկեղեցին ավերված վիճակում է, ամբողջապես քանդված է ծածկը՝ գմբեթի հետ միասին, մնում է սյուները միացնող կամարը և ծածկի հարավ-արևմտյան անկյան փոք-

րիկ մասը, քանդված է նաև հարավային պատի կենտրոնի մասը՝ մինչև մուտքի ճակատակալ քարը և արևմտյան պատի հյուսիսային մասը:

**Ս. Գրիգոր գավթի-ժամատուն.**—Գտնվում է ս. Աստվածածնի անվան մեծ եկեղեցու հարավային կողմում, անմիջապես նրան կից, այնպես որ գավթին այդ կողմից առանձին պատ չունի, այլ նրա այդ մասի ծածկի թաղի եզրերը հենվում են եկեղեցու պատին կից ձգվող կիսապուրակները միացնող որմակամարների վրա:

Ինչպես երևում է ներսում փորագրված արձանագրությունից (արձանագրություն Ի), ժամատունը կառուցել է Մամիկոնյան Մարծպանի որդի Գրիգոր իշխանը՝ Հայոց ՈՂ (մեր թվագրության 1241) թվականին (նկ. 3):


Բացի այդ արձանագրությունից, պահպանվել են գավթի կառուցմանը վերաբերող, նրա վրա փորագրված ութ արձանագրություն, որոնցից պարզվում է, որ Մարծպանի ծառա (վասալ) Սևահն 1242 թվականին կառուցել է գավթի մի մաստուրը (խորան) (արձանագրություն ԻԲ). Մարծպանի որդի Ասլանբեկը 1245 թվականին շինում է վանքի մյուս երկու մաստուր-խորանները (արձանագրություն ԺԲ): Հաղբատի վանքի ստաշնորդ Համազասպ արքեպիսկոպոսի եղբայր Գրիգորը շինում է մյուս մաստուր-խորանը (արձանագրություն ԻԱ). Խաղբակյան Վասակի որդի Պողոս իշխանը 1247 թվականին հարյուր ոսկի դրամ է նվիրում վանքի շինությանը (արձանագրություն ԺԷ):

Ներսում գտնվող չորս պուրակներից հյուսիս-արևելյանը կանգնեցրել են Համիկն ու Մամբանը (արձանագրություն ԻԴ), հյուսիս-արևմտյանը՝ Ջառեկը և Ասանթը՝ Հայոց ՈՂԵ (մեր թվագրության 1246) թվականին (արձանագրություն ԻԵ). հարավ-արևելյանը՝ Հովհաննես միայնակեցը (արձանագրություն ԻԶ) և հարավ-արևմտյանը՝ Կիկոնը և իր ամուսինը (արձանագրություն ԻԸ):

2նայած մեջ բերած կառուցողական ութ արձանագրություններից չորսը տարեթվեր չունեն, այնուամենայնիվ որոշակի ու միանգամայն պարզ է դառնում, որ գավթի կառուցումը սկսված պետք է լինի 1241 թվականին և ավարտված 1247 թվականին:

Այդ շենքը նույնպես ավերակ վիճակում է և, ինչպես պարզվում է նրա կանգուն մնացած մասերից ու տեղում թափված բեկորներից, այն կառուցված է միջնադարի հայկական գավթիների ընդհանուր ձևով: Սակայն նրա մի շարք առանձնահատկությունները՝ քառակուսի հատակագիծը, անհամեմատ ընդարձակածավալ լինելը, որից և պուրակն ու կիսապուրակները միացնող կամարների





Նկար 5. Բարձրաքաշ ա. Գրիգոր վանք.—Գավիթը հարավ-արևելքից (արևելյան դուռն շեշտված արքիդը՝ ճակատամասում Մամիկոնյանների տոհմանիշը քանդակված)

խիստ լայնաթոփչք լինելը, հատուկ արքիդի գոյությունը արևելյան կողմում, այդ նույն կողմի անկյուններում եղած կրկնահարկ խորանները և շքեղագարդ քանդակագործությունը այն դարձնում են առավել արժեքավոր ու հետաքրքիր, ուստի խիստ նշանակալից է հայկական ճարտարապետության պատմության մեջ:

Սրա հատակագիծը քառակուսի ձև ունի, ներսում համաչափ ձևով տեղադրված չորս սյուները և յուրաքանչյուր պատին կից ձրգվող երկուական կիսասյուները միանալիս են եղել կամարներով, կազմելով թաղակապ ծածկը՝ կենտրոնում հատուկ լուսանցքով, երդիկի ձևով (ճկ. 4):

Սյուների և կիսասյուների բները, խարիսխներն ու խոյակները ամբողջական խոշոր քարերից են, ըստ որի արևելյան կողմի սյուների բները ութ կողանի են, իսկ արևմտյան կողմի սյուների բները դարձյալ ութ կողանի, արևմտյան կողմի սյուները՝ 12 կողանի: Հարավային, արևելյան և արևմտյան պատերին կից ձգվող կիսասյուների բները գլանաձև են, իսկ հյուսիսային պատի կիսասյուները հինգ կողանի: Դրանց բոլորի խարիսխներն ու խոյակները իրենց բների համապատասխան ձևով են:

Արևելյան կողմից ունի դուռն շեշտված արքիդ՝ արտաքուստ հնգակող, իսկ ներսից՝ կիսակրթի ձևով: Արևելյան կողմի անկյուն-

ներում կառուցված են երկհարկանի խորաններ: Ստորին հարկի խորանների մուտքերը քացվում են դեպի արևմուտք՝ գավթի մեջ, իսկ վերին հարկի խորանների մուտքերը՝ արքիդի առջևում, իրար դիմաց:

Երկու մուտքերից մեկը քացվում է արևմտյան, իսկ մյուսը՝ հարավային կողմերից, որոնք ունեն կիսակրթ ճակատակալ մեծ քարեր և գեղեցկագարդ պարակալներ: Մեկական երկար ու նեղ զույգ լուսամուտներ քացվում են արևելյան և հարավային պատերի կենտրոնական մասերից, մեկ լուսամուտ՝ արևմտյան պատի կենտրոնից և մեկական շատ փոքր լուսամուտներ էլ՝ խորանների արևելյան պատերից:

Ամբողջ շենքը կառուցված է կապտագույն բազալտի և վարդագույն տուֆի մաքուր տաշված մեծ քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Սյուները, կիսասյուները և դրանց միացնող կամարները կապտագույն բազալտ քարից են, իսկ մնացած մասը՝ վարդագույն տուֆ քարից:

Հուշարձանը շքեղորեն զարդարված է եղել տարբեր ձևերի շատ գեղեցիկ և վերին աստիճանի նրբությամբ մշակված քանդակներով, որոնք նկատվում են ինչպես կանգուն մնացած մասերի, այնպես էլ գետնին թափված բեկորների վրա: Առանձնապես հետաքրքիր են գավթի առաստաղին տարբեր գույնի ներկերով արված նկարազարդե-





Նկար 4. Բարձրաքաշ ս. Գրիգոր վանք.— Գավթի ներսի տեսարան

րը, որպիսիք նկատում ենք նաև Աստված-ընկալ ս. Նշան վանքի (Աստվածածին շրջան) գավթի առաստաղի վրա և, որը եզակի երե-վույթ է հայ ճարտարապետության այդ կար-գի կառուցվածքների մեջ: Խիստ բնորոշ և նշանակալից են նաև գավթի արևմտյան մուտքի պարակալը զարդարող հինգ թևանի աստղաձև քանդակները: Արտաքուստ, արե-վելյան արսիդի դուրս շեշտված մասի վրա քանդակված է Մամիկոնյան իշխանների տոհմանիշը՝ երկգլխանի արծիվը՝ գառը ճանկերում բռնած: Հարավային պատի ար-տաքին երեսի վրա շատ հետաքրքիր ձևով քանդակված է արևի ժամացույց:

Թե՛ գավթի-ժամատունը և թե՛ մեծ եկեղե-ցին սալահատակված են եղել, իսկ տանիք-ները պատված խոշոր սալաքարերով:

**Գերեզմանոցը.**—Տարածվում է վանքի հուշարձանների խմբից դեպի հարավ, 150 մետրաչափ հեռու: Բավական ընդարձակ գերեզմանատուն է, որ բացի տապանաքա-րերից կան նաև քաղմաթիվ խաչարձաններ, որոնք բոլորն էլ կապտագույն քաղաղտ քա-րից են: Գերեզմանաքարերը մեծ մասամբ բնական սալաքարեր են, կան նաև թույլ մշակված առանձին տապանաքարեր, որոնք բոլորն էլ թաղված են գետնի մեջ, իսկ մի

մասն էլ ծածկված հողով:

Գերեզմանոցում եղած խաչարձանների պատվանդանները կիսամշակ կամ թույլ մշակված ձևով են, որոնց խաչքարերը բո-լորն էլ վայր են ընկած ու ջարդված, իսկ դրանց մի մասն էլ անհայտացած: Տեղում պահպանված խաչքարերի բեկորները զար-դարված են բուսական ու երկրաչափական ձևերի քանդակներով: Երկրաչափական ձե-վերով քանդակների մեջ գերակշռում են քառակուսաձև և ութ թևանի աստղաձև զար-դաքանդակները:

Տապանագրություններ չի նկատվում, ուս-տի նրա գոյության ժամանակը ճշտիվ որոշ չէ. սակայն տապանաքարերի և խաչար-ձանների մշակման ձևերը հավանական են դարձնում, որ այն վերաբերում է Ժ—ԺԴ դարերին:

**Ս. Հարություն դամբարանը.**—Գտնվում է վերոհիշյալ գերեզմանատանը: Մատուռի ձևով կառուցված շատ փոքրիկ շենք է, որի արևելյան, հարավային և հյուսիսային պա-տերի փոխարեն դրված են մեկական մեծ սալաքարեր, իսկ արևմտյան կողմից ամբող-ջապես բաց է մուտքի համար: Նույն մեծ սալաքարերից է բնակացած նաև ծածկը, վերջինիս վրա պահպանվել է խաչքարի



պատվանդանը՝ դարձյալ ամբողջական մեծ քարից: Խաչքարը տեղից վայր է ընկել գետնին. վերջինս բավականին մեծ է. գեղեցիկ բանդակներով զարդարված, որոնք հիշեցնում են վեց թևանի աստղեր՝ շղթայաձև հյուսված:

**Զիթհանք.**—Գտնվում է վանքի հարավային կողմում, միաբանության բնակելի շենքերի սահմաններում: Զիթհանքի շենքը նույնպես ավերակ վիճակում է. պահպանվել են պատերի ստորին մասերը, որոնք շարված են բնական խոշոր որձաքարերով՝ հո-



Նկար 5. Դսեղ-Թումանյան. — Քառասնից մանկանց վանքը հարավ-արևմուտքից

Արևելյան կողմի պատ-ապարարի արտաքին երեսի վրա փորագրված արձանագրության համաձայն (արձանագրություն ԼԳ) այդ դամբարան-մահարձանը կառուցել են տվել Հովհաննես վարդապետը և իր եղբայր Սարգիսը՝ Հայոց ՌԾԳ (մեր թվագրության 1204) թվականին: Ավանդաբար այդ մահարձանին «Ագոստի տապան» անունն են տալիս:

**Վանքի միաբանության բնակելի շենքերը.**—Տարածվում են մենաստանի հարավային և արևմտյան կողմերում: Բավականին մեծ թիվ կազմող այդ բոլոր շենքերն էլ հիմնովին ավերակ վիճակում են՝ պահպանվել են առանձին շենքերի պատերի ստորին մասերը, որոնք շարված են կապտագույն բազալտ քարի կտորներով, հողաշաղախի միացությամբ:

ղաշաղախի միացությամբ: Ներսում ընկած է ձիթապտուղը տրորող կլոր մեծ քարը: Սրա, ինչպես և վանքի միաբանության բնակելի շենքերի կառուցման ժամանակը պարզ չէ:

Մենաստանից քիչ վերև, դեպի գյուղը տանող լեռնային կաճանի աջ եզրին գտնվում է մի հորդաբուխ, սառնորակ աղբյուր, որից օգտվել է վանքի միաբանությունը:

**Քառասնից Մանկանց վանք.**—Գտնվում է գյուղի արևմտյան կողմում, Դեբեդա-ձորի աջ ձորալանջին: Զորն այդ հատվածում խիստ ընդարձակվում է, իր աջակողմյան լանջում առաջացնելով բավականին ընդարձակ մի հարթավայր: Հենց այդ հարթավայրի արևելյան եզրին, անմիջապես ձորի բարձր քարալի մերթևում, տեղադրված է վանքը (նկ. 5):

(Ծառուակելի)